
**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲՈՒՀԵՐՈՒՄ**

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի անգլերենի ամբիոնի վարիչ,
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջազգային համագործակցության
և հանրային կապերի բաժնի գլխավոր մասնագետ,
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի Փրկարար ծառայության և
ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման
ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների
ամբիոնի համատեղման կարգով անգլերենի դասախոս
DOI:10.63925/18294847-2026.bi21-06

Համառոտագիր. Սույն հոդվածում քննության են առնվում «Իրավագիտություն» մասնագիտությամբ կրթական ծրագրերում անգլերենի դասավանդման տեսական և գործնական առանձնահատկությունները՝ մասնագիտական բառապաշարի յուրացման, միջազգային իրավական ակտերի և գրականության ընթերցման և իրավաբանական հաղորդակցության մշակույթի ձևավորման համատեքստում:

Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև անգլերենի իմացությունը՝ որպես իրավաբանի համար առօրյա հաղորդակցության և մասնագիտական գործունեության կենսական բաղադրիչ՝ ապահովելով ապագա իրավաբանի ներգրավվածությունը և մասնագիտական աճը միջազգային իրավական գործընթացներում:

Բանալի բառեր. Բարձրագույն կրթություն, իրավագիտություն, օտար լեզուներ, անգլերեն, իրավաբանական տեքստեր, ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ներածություն: Իրավաբանական անգլերենի դասավանդումը պահանջում է նպատակային մեթոդաբանություն, որտեղ առաջնային տեղ է հատկացվում միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի, դատական ակտերի և իրավաբանական փաստաթղթերի ընթերցմանը և վերլուծությանը:

Սույն համատեքստում կարևոր է քննարկել դասավանդման գործընթացում ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերը, մասնավորապես՝ իրավական տեքստերի թարգմանության, մասնագիտական զեկույցների պատրաստման և միջազգային դատավարությունների մոդելավորման տեսանկյունից:

Դասավանդման առանձնահատկությունները դիտարկելիս ուսումնասիրվել է միջազգային փորձը, անգլերենը հատուկ նպատակների համար՝ ESP-ի (English for Specific Purposes) տեսական հիմքերը, ինչպես նաև հայաստանյան բուհերում անգլերենի դասավանդման առանձնահատկությունները¹:

Քննության են առնվել տերմինաբանական հենքի խնդիրները, թարգմանական դժվարությունները և իրավաբանական հաղորդակցության կառուցվածքային առանձնահատկությունները:

Ինչպես լեզվի տեսաբան Ջիմ Քումինսն է փաստում՝ մեծ տարբերություն կա խոսակցական լեզվի և մասնագիտական ոլորտներում գործածվող ակադեմիական լեզվի մակարդակների միջև:

Նա ստեղծել է լեզվի ուսուցման երկու հասկացությունների՝ ակադեմիական լեզվի ճանաչողական կարողունակությունների (CALP-cognitive academic language proficiency) և միջանձնային հաղորդակցության հիմնական հմտությունների (BICS-basic interpersonal communication skills) վերաբերյալ տեսություն², որտեղ տարանջատում է լեզվական այս երկու մակարդակներին բնորոշ առանձնահատկությունները:

Թեպետ շատ ուսանողներ կարող են խոսակցական անգլերենի սահուն մակարդակ ապահովել, սակայն նրանք երբեմն դժվարություն են ունենում ակադեմիական անգլերենի ոլորտում: Ուստի հարկավոր է նախ և առաջ ուսանողներին ուսուցանել քննադատական

¹ Տե՛ս «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամում, օրինակ, սահմանված է, որ ուսանողը պետք է անգլերենի իմացության B1 մակարդակ ունենա 3-րդ կուրսն ավարտելուց հետո, որը պետք է հավաստված լինի համապատասխան հավաստագրով:

² Տե՛ս մանրամասն Cummins J., Language, Power, and Pedagogy. Bilingual Children in the Crossfire. Multilingual Matters LTD, California, 2000.

մտածողության՝ դասակարգայնորեն համեմատելու, վերլուծելու, գնահատելու և համադրելու հմտություններ³:

Իրավագիտություն ուսումնասիրող ուսանողներին անգլերեն դասավանդելիս հարկավոր է ցուցաբերել ինտեգրված մոտեցում՝ միավորելով լեզվաբանական, իրավական և գործնական հմտությունները:

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրերում անգլերենի դասավանդումը հարկ է դիտարկել ոչ թե որպես օժանդակ առարկա, այլ որպես մասնագիտական պատրաստվածության հիմնական բաղադրիչ: Անհրաժեշտ է ներմուծել նորարարական մեթոդներ, զարգացնել համատեղ աշխատանքը լեզվաբանների և իրավաբանների միջև, ինչպես նաև ակտիվացնել ուսանողների ներգրավվածությունը միջազգային կրթական ծրագրերում:

Նշված կրթական ծրագրերն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ անգլերենի ուսուցումը՝ որպես օտար լեզու, ՀՀ որոշ բուհերում իրականացվում է հատուկ կրթական ծրագրի շրջանակներում, երբ ուսանողներն ուսումնասիրում են անգլերենի տարբեր մակարդակներ՝ սկսնակ փուլից, մինչև լեզվի իմացության որոշակի մակարդակ, որը սահմանված է տվյալ բուհի կողմից:

Անգլերենի դասավանդման առանձնահատկությունները: Ներկայումս իրավաբանական պրակտիկան նվաճում է միջազգային հարթակներ, ուստի իրավաբանական կրթության որակը հաճախ պայմանավորված է ոչ միայն կոնտենտային մասնագիտական գիտելիքով, այլև միջազգային տվյալների՝ դատավարական և դատական աղբյուրների ճիշտ ընթերցման և կիրառման կարողությամբ:

Իրավագիտության ոլորտում մասնագիտական պատրաստվածության մակարդակն անմիջականորեն առնչվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին: Այս համատեքստում օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերենի իմացությունը դառնում է ժամանակի հրամայական:

³ Տե՛ս Yeghiazaryan G. On Some Problems of Teaching in Content Areas. Foreign Language for Special Purposes// International Journal, Vol.5, Yerevan: Yerevan State University Press, 2005, էջ. 106-115.

Ժամանակակից իրավագիտությունը գլոբալ բնույթ ունի. իրավական համակարգերը փոխառնչվում են միմյանց հետ, միջազգային իրավունքի նորմերը դառնում են ներպետական օրենսդրության զարգացման առանցքային բաղադրիչ: Հետևաբար, անգլերենի ուսուցումն իրավագիտության կրթական ծրագրեր իրականացնող բուհերում ոչ միայն մասնագիտական կարողությունների զարգացման, այլև միջազգային իրավական դաշտում մասնագետների մրցունակության երաշխիք է:

«Կրթական իրականության մեջ, սակայն, ոչ լեզվաբանական մասնագիտությունների դեպքում օտար լեզվի դասավանդման և ուսուցման մեթոդիկայի գիտական ուսումնասիրությունները երբեմն բավարար ուշադրության չեն արժանացել:

Եթե տեխնոլոգիական ոլորտում օտարալեզու մասնագիտական գրականության հասանելիությունը կարևորում է մասնագիտական գրագիտության զարգացումը, ապա իրավագիտության պարագայում անգլերենի ուսուցումն առաջին հերթին պետք է ուղղված լինի իրավական տեքստերի խորքային ըմբռնմանը, միջազգային իրավունքի սկզբունքների յուրացմանը, համաշխարհային փորձին ծանոթությանը, ազգային և միջազգային իրավագիտական խնդիրների համեմատական վերլուծությանը:

Քանի որ ներկայումս կարևորվում են կիրառական գիտության խնդիրները, անհրաժեշտ է ոչ միայն բացահայտել տվյալ ոլորտում կատարված հանցագործությունները՝ համացանցային խարդախությունների միջոցով դրամներ շորթելու, թմրանյութեր տարածելու գործելաոճը, այլև նման երևույթներին տալ իրավական համաչափ գնահատական: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է իրավաբանական անգլերենի ընթերցանությունը համացանցի միջոցով, որպեսզի հնարավոր լինի կանխել տարատեսակ հանցագործությունների իրականացումը⁴:

Անգլերենի ոլորտային իմացությունն ապագա իրավաբանին նաև հնարավորություն է ընձեռում մասնակցել միջազգային դատական նիստերին, գիտաժողովներին, բանակցություններին, ինչպես նաև կապ հաստատել արտասահմանյան գործընկերների ու միջազգային կազմակերպությունների հետ:

⁴Տե՛ս մանրամասն Առաքելյան Մ., Իրավաբանական անգլերեն մեդիատեքստերի ընթերցանությունը համացանցի միջոցով, Եր.: «Աստղիկ» հրատ., 2025, էջ 42-48:

Անգլերենի դասավանդման արդյունավետ մեթոդաբանությունը:

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող բուհերում անգլերենի ուսուցման արդյունավետությունը կախված է մի շարք առանձնահատկություններից:

Նախ՝ ուսումնական պլանով օտար լեզվին հատկացված ժամաքանակը հաճախ սահմանափակ է, ինչը բարդացնում է ուսանողների կողմից թե՛ իրավաբանական տերմինաբանության և թե՛ գործնական հաղորդակցական հմտությունների յուրացումը: Բացի այդ, իրավաբանական տեքստերը լեզվաբանական տեսանկյունից խրթին են, առանձնանում են եզրույթների առատությամբ և իմաստային բազմաշերտությամբ: Արդյունքում՝ դասախոսը կանգնում է բարդ խնդրի առաջ՝ միաժամանակ զարգացնել թե՛ ուսանողների ընդհանուր լեզվական կարողությունները, թե՛ նրանց մասնագիտական բառապաշարը:

Անգլերենի դասավանդման նպատակն իրավագիտության կրթական ծրագրերում ոչ թե առօրյա հաղորդակցական խոսքը զարգացնելն է, այլ իրավաբանական ոլորտում անխոչընդոտ գործելու ունակությունների զարգացումը:

Իրավաբան ուսանողների համար անգլերենի դասավանդման գործընթացում կարևոր է ընտրել այնպիսի դասագրքեր, որոնք ոչ միայն զարգացնում են ընդհանուր լեզվական հմտությունները, այլ նաև ապահովում են հաղորդակցական ակտիվություն: Այդ նպատակով հատկապես արդյունավետ է «Cambridge Interchange» դասագրքի օգտագործումը (հեղինակ՝ Jack C. Richards)⁵:

Այս դասագիրքը միջազգային չափանիշներին համապատասխանող և աշխարհում լայնորեն կիրառվող ուսումնական ձեռնարկ է: Այն ապահովում է անգլերենի չորս հիմնական հմտությունների՝ խոսելու, լսելու, կարդալու և գրելու հավասարաչափ զարգացում: Յուրաքանչյուր բաժին կառուցված է այնպես, որ ուսանողն աստիճանաբար անցնի բառապաշարի յուրացումից և քերականական նյութի ըմբռնումից դեպի հաղորդակցական հմտությունները զարգացնող առաջադրանքներ:

⁵Տե՛ս մանրամասն Ոսկանյան Ա., «Միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացումը իրավագիտության անգլերենի դասընթացում»: Կրթությունը 21-րդ դարում, Երևան, 2023, էջ 208–216:

«Cambridge Interchange» դասագրքերի շարքը ներառում է չորս հիմնական մակարդակ, որոնք համապատասխանում են Եվրախորհրդի մշակած Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի (ԼԻՀՀ, CEFR – Common European Framework of Reference for Languages)⁶ **A1**-ից մինչև **B1** մակարդակներին: Իսկ **C1** և **C2** առաջընթաց մակարդակների համար որպես շարունակություն նպատակահարմար է կիրառել «Cambridge Objective Advanced» և «Cambridge Objective Proficiency» դասագրքերը⁷:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև դասագրքին կից տրամադրված ձայնագրությունների (audio recordings) կիրառման կարևորությունը: Դասերի ընթացքում դրանց օգտագործումը նպաստում է լսողական ընկալման հմտությունների զարգացմանը, տարբեր արտասանությունների և ձայներանգների ճանաչմանը, արտասանության և ձայներանգի ճիշտ ձևավորմանը և արդյունքում՝ հաղորդակցական իրական միջավայր ստեղծելու հնարավորությանը:

Այս մոտեցումը հատկապես արժեքավոր է ապագա իրավաբանների համար, քանի որ նրանք պետք է կարողանան լսել, հասկանալ և ճիշտ արձագանքել լսածին՝ տարբեր իրավական համատեքստերում՝ միջազգային գիտաժողովներում, բանակցություններում և դատական գործընթացներում:

Ուսումնական գործընթացում «Cambridge Interchange» դասագրքի և ձայնագրությունների համակարգված կիրառումը հնարավորություն է տալիս ձևավորելու ոչ միայն լեզվական գիտելիքներ, այլ նաև գործնական և մասնագիտական հաղորդակցական պատրաստվածություն, ինչը համապատասխանում է ժամանակակից իրավաբանական կրթության պահանջներին:

Դասավանդման ընթացքում պետք է ձևավորվեն հմտություններ, որոնք հնարավորություն կտան ուսանողներին կարդալ և մեկնաբանել միջազգային պայմանագրեր, դատական ակտեր, իրավաբանական փաստաթղթեր, ազատ

⁶Տե՛ս Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, Ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով: Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, Երևան, 2005:

⁷Տե՛ս Richards J. C., Hull J., Proctor S., Interchange (Fifth Edition), Cambridge: Cambridge University Press, 2017.

արտահայտվել բանավեճերում, պատրաստել գիտական հոդվածներ և իրավական եզրակացություններ, ինչպես նաև մասնակցել միջազգային իրավական նախագծերի մշակմանը:

Դասավանդման մեթոդաբանության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել փուլային մոտեցում: Սկզբնական փուլում շեշտը դրվում է լեզվական ընդհանուր հիմքերի ամրապնդման վրա՝ ներգրավելով իրավաբանական բառապաշարի տարրական շերտը:

Հաջորդ փուլերում աստիճանաբար ավելացվում են մասնագիտական բարդ տեքստեր, օրենսդրական ակտերի և միջազգային իրավունքի նորմերի վերլուծությանը միտված վարժություններ: Տեքստերի ընտրության ժամանակ առաջնային է ուսանողների մասնագիտական կողմնորոշումը. դրանք պետք է համապատասխանեն ուսուցման նպատակներին և ուսանողների պատրաստվածության մակարդակին:

Ուսուցման առանձնահատուկ ուղղություններից է ուսանողների ինքնուրույն աշխատանքը, որը ոչ միայն նպաստում է լեզվական գիտելիքների ամրապնդմանը, այլև ձևավորում է քննադատական մտածողություն և իրավական տեքստերի վերլուծության ունակություն:

Արտալսարանային առաջադրանքները կարող են ներառել միջազգային իրավական փաստաթղթերի թարգմանություններ, դատական գործերի համեմատական ուսումնասիրություններ, իրավաբանական տերմինների բառարանային աշխատանքներ: Այս ամենը նպաստում է մասնագիտական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Իրավաբանական կրթության առանձնահատկություններից է նաև այն, որ ուսանողները պետք է ունենան ոչ միայն գրավոր, այլև բանավոր հաղորդակցման բարձր մակարդակ: Հատուկ ուշադրություն է պահանջում մենախոսության և երկխոսության հմտությունների ձևավորումը: Մենախոսության շրջանակում ուսանողը պետք է կարողանա իրավական թեմայի շուրջ հանդես գալ վերլուծական զեկույցով, հիմնավորել սեփական կարծիքը և ներկայացնել իրավական դիրքորոշում:

Երկխոսության մեջ ուսանողը պետք է ունակ լինի իրավաբանական բանավեճի, կարողանա հարցաքննության կամ բանակցության ձևաչափում հստակ արտահայտել իր մտքերը, արձագանքել ընդդիմադիր կողմի փաստարկներին:

Անգլերենի դասավանդման գործընթացում անփոխարինելի դեր ունեն ժամանակակից տեխնոլոգիաները: Իրավաբանական ուղղվածությամբ ֆիլմերի դիտումը, միջազգային դատավարությունների ձայնագրությունների ունկնդրումը, առցանց հարթակներում իրավաբանական հոդվածների ընթերցումն ստեղծում են լեզվական իրական միջավայր: Բացի այդ, դերային խաղերը («դատական նիստ», «բանակցություն», «պաշտպանություն և մեղադրանք») նպաստում են ուսանողների մասնագիտական հաղորդակցական հմտությունների զարգացմանը: Այս մեթոդները ոչ միայն հետաքրքիր են, այլև խթանում են ուսանողների հետաքրքրվածությունը և ինքնավստահությունը:

Չպետք է անտեսել նաև ուսանողների հոգեբանական առանձնահատկությունները: Առաջին կուրսի ուսանողները հաճախ դժվարանում են ինքնուրույն աշխատել իրավաբանական բարդ տեքստերի հետ: Այդ իսկ պատճառով դասախոսը պետք է ստեղծի պայմաններ, որտեղ ուսանողներն աստիճանաբար ընտելանան իրավաբանական լեզվին և կարճ ժամանակում ձեռք բերեն վստահություն սեփական կարողությունների նկատմամբ: Պրակտիկ փորձը ցույց է տալիս, որ թիմային աշխատանքը, փոխադարձ ուղղումները և քննարկումները նպաստում են լեզվական ազատության և ստեղծագործական մտածողության ձևավորմանը:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ իրավագիտության կրթական ծրագրեր իրականացնող բուհերում անգլերենի դասավանդման հիմնական առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝ մասնագիտական տերմինաբանության և իրավաբանական տեքստերի բարդությամբ, իսկ մյուս կողմից՝ միջազգային իրավական դաշտում հաղորդակցվելու անհրաժեշտությամբ:

Ուսուցման արդյունավետությունն ապահովվում է ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների, ինքնուրույն աշխատանքի և հաղորդակցական գործնական վարժությունների համադրմամբ: Այս ամենի նպատակն է պատրաստել այնպիսի

իրավաբաններ, որոնք կկարողանան մրցունակ լինել ոչ միայն ազգային, այլև միջազգային իրավական հարթակում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

«Իրավագիտություն» մասնագիտությամբ կրթական ծրագրեր իրականացնող բուհերում անգլերենի դասավանդումն առանձնանում է որոշակի բարդությամբ և պահանջում է բազմաշերտ մոտեցում: Հիմնական խնդիրը ոչ միայն ընդհանուր լեզվական կարողությունների զարգացումն է, այլև իրավաբանական մասնագիտական բառապաշարի իմացությունը և միջազգային իրավական տեքստերի խորքային ըմբռնումը:

Անգլերենի դասավանդումը դառնում է գործիք՝ ապագա իրավաբանին միջազգային իրավական համակարգում լիարժեք ներգրավվելու, մրցունակ մասնագետ դառնալու և արդի իրավական գործընթացներին համընթաց գործելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնական ծրագրերի կատարելագործում. անհրաժեշտ է ավելացնել օտար լեզվի դասավանդման ժամաքանակը և ինտեգրել իրավաբանական առարկաների հետ, օրինակ՝ «Legal English» առանձին մոդուլների ներդրում:

Տերմինաբանական բառարանների ստեղծում և օգտագործում. յուրաքանչյուր ուսանող պետք է հնարավորություն ունենա աշխատելու ժամանակակից իրավաբանական բառարաններով, որոնք կներառեն միջազգային իրավունքի և համեմատական իրավագիտության հիմնական հասկացությունները:

Դերային մոդելների կիրառում. «մոդելավորված դատավարություններ» (moot courts), բանակցությունների սիմուլյացիաներ և քննարկումներ միջազգային պայմանագրերի շուրջ: Այս մեթոդները ոչ միայն զարգացնում են բանավոր խոսքը, այլև ձևավորում են իրավաբանական մտածողություն՝ օտար լեզվով:

Ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավում. առցանց հարթակներ, միջազգային իրավաբանական բազաներ, վեբինարներ և առցանց դատական նիստերի դիտումներ, որոնք ուսանողին անմիջականորեն ներգրավում են համաշխարհային իրավական գործընթացներին:

Ինքնուրույն աշխատանքի խթանում. ուսանողներին տրամադրել կոնկրետ իրավաբանական առաջադրանքներ՝ միջազգային փաստաթղթերի վերլուծություն, իրավական եզրակացությունների պատրաստում անգլերենով, դատական ակտերի համեմատական ուսումնասիրություն: Սա ոչ միայն զարգացնում է լեզվական կարողությունները, այլև՝ քննադատական մտածողությունը:

Հոգեբանական և մեթոդաբանական աջակցություն. դասախոսները պետք է օգնեն ուսանողներին հաղթահարել օտարալեզու հաղորդակցության կաշկանդվածությունը՝ կիրառելով թիմային աշխատանք, փոխադարձ ուղղումներ և գործընկերային քննարկումներ:

Միջազգային համագործակցության խթանում. հարկ է ուսանողներին ներգրավել միջազգային իրավաբանական ծրագրերի, ուսանողական փոխանակման ծրագրերի և համատեղ գիտաժողովների գործընթացին: Սա կապահովի լեզվական միջավայրի ստեղծումը և մասնագիտական հմտությունների ամրապնդումն իրական պայմաններում:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են անգլերենի դասավանդման առանձնահատկություններն «Իրավագիտություն» մասնագիտությամբ կրթական ծրագրեր իրականացնող բուհերում:

Նշվում է, որ իրավաբանական անգլերենի ուսուցումը տարբերվում է լեզվի ընդհանուր դասընթացներից, քանի որ այն ուղղված է մասնագիտական մտածողության ձևավորմանը, իրավաբանական փաստաթղթերի վերլուծությանը և ոլորտային տերմինաբանության ճշգրիտ կիրառմանը:

Հոդվածում շեշտադրվում է իրավական եզրույթների ճիշտ թարգմանության և համարժեքների ընտրության, ինչպես նաև անգլերենով հաղորդակցության ընթացքում իրավական փաստարկումների մշակույթի կարևորությունը:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ իրավագիտություն ուսումնառողների համար անգլերենի դասավանդումն առավել արդյունավետ է, երբ այն

ներառում է գործնական վարժություններ՝ դատական գործերի վերլուծություն, իրավական գրագրության ձևավորում և բանավոր բանավեճեր:

Որպես եզրահանգում՝ նշվում է, որ իրավաբանական անգլերենի դասավանդումը հարկ է կազմակերպել միջմշակութային և ոլորտային համատեքստում՝ զարգացնելով ուսանողների լեզվամտածողությունն ու իրավական հարցերի շուրջ հաղորդակցական հմտությունները:

PECULIARITIES OF TEACHING ENGLISH IN HIGHER EDUCATION INSTITUTIONS OFFERING LAW PROGRAMS

YEGHIAZARYA GAYANE

Brusov State University, Head of the Chair of English,
Doctor of Philological Sciences, Professor

POGHOSYAN LEONARD

Chief Specialist of the International Cooperation and Public Relations Department,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
Lecturer at the Chair of General Humanities and Socioeconomic Disciplines,
Rescue Service and Crisis Management Educational Unit

Abstract. The article analyzes the distinctive aspects of legal English instruction in higher educational institutions offering degree programs in law.

It is noted that the teaching of legal English differs substantially from general language courses, as it is aimed at the formation of professional thinking, the analysis of legal documents and the accurate use of special terminology.

The article emphasizes the importance of accurate translation of legal terms and the choice of equivalents, as well as the culture of legal argumentation during communication in English.

The results prove that teaching English for law students is most effective when it includes practical exercises: analysis of court cases, development of legal writing and oral debates.

It is concluded that the teaching of legal English should be organized in an intercultural and sectoral context, developing students' linguistic thinking and legal communicative skills.

Keywords: higher education, law, foreign languages, English, legal texts, modern technologies.

ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ, РЕАЛИЗУЮЩИХ ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ПРОГРАММЫ ПО СПЕЦИАЛЬНОСТИ «ЮРИСПРУДЕНЦИЯ»

ЕГИАЗАРЯН ГАЯНЕ

Заведующая кафедрой английского языка ГУ им. В. Брюсова,
Д. филол. наук, профессор

ПОГОСЯН ЛЕОНАРД

Главный специалист отдела международного сотрудничества и связям с общественностью Образовательного комплекса МВД РА, по совместительству преподаватель английского языка кафедры общих гуманитарных и социально-экономических дисциплин Образовательного комплекса МВД РА

Аннотация. В данной статье рассматриваются теоретические и практические особенности преподавания английского языка в образовательных программах по специальности «юриспруденция» в контексте овладения профессиональной лексикой, чтения международно-правовых актов и литературы, формирования культуры юридического общения. В статье также рассматривается знание английского языка как жизненно важного компонента повседневного общения и профессиональной деятельности юриста, обеспечивающего профессиональный рост и вовлечение будущего юриста в международные правовые процессы.

Ключевые слова: высшее образование, юриспруденция, иностранные языки, английский язык, юридические тексты, современные технологии.

Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Մ., Իրավաբանական անգլերեն մեդիատեքստերի ընթերցանությունը համացանցի միջոցով, Երևան, 2025, էջ 42–48:
2. Ոսկանյան Ա., Միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացումը իրավագիտության անգլերենի դասընթացում, «Կրթությունը 21-րդ դարում», Երևան, 2023, էջ 208–216:
3. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսուցում, դասավանդում, գնահատում, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ–Երևան, 2005:
4. Yeghiazaryan G., On Some Problems of Teaching in Content Areas, Foreign Language for Special Purposes // International Journal, Vol.5, Yerevan: Yerevan State University Press, 2005, pp 106-115.
5. Cummins, J., Language, Power, and Pedagogy: Bilingual Children in the Crossfire, California, Multilingual Matters LTD, California, 2000:
6. Richards, J. C., Hull, J., Proctor, S., Interchange (Fifth Edition), Cambridge: Cambridge University Press, 2017:

Հոդվածը գրախոսվել է 26.01.2026
Ներկայացվել է տպագրության 30.01.2026